Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ՝ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սարգիս Հայոցյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, ք. Մանչեսթեր, նոյեմբերի 12-ից 14-ը, 2024 թվական

4. Հրավիրող կողմը

Բրիտանական խորհրդի հայաստանյան ներկայացուցչություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն «Խորքային երկխոսություն 2024. անդրազգային կրթություն. խորքային հայացք դեպի անդրազգային կրթությունը կանոնակարգող միջավայր և քաղաքականություն» խորագրով միջոցառմանը

6. Քննարկված թեմաները

- բարձրագույն կրթությունը միջազգային դիտանկյունից և վերջինիս զարգացման միտումները,
- բարձրագույն կրթության ազատականացումը և դրա ադեցությունը անդրազգային կրթության վրա,
- փոխադարձ շահի վրա հիմնված կայուն և բարձրակարգ անդրազգային կրթության ապահովում,
- համատեղ միջազգային հավատարմագրում.որակի ապահովման մարտահրավերներ,
- անդրազգային կրթության ոլորտում տվյալների համակարգ,
- անդրազգային կրթության հարմարեցումը տարբեր մշակութային համատեքստերում,
- անդրազգային կրթության ոլորտում Մեծ Բրիտանիայի բուհերի փորձը,
- այլ հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

2024 թվականի նոյեմբերի 12-ից 14-ը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը Բրիտանական խորհրդի հայաստանյան ներկայացուցչության հրավերով մասնակցել է գլոբալ կրթական ծրագրերի շրջանակում Բրիտանական խորհրդի կողմից իրականացվող «Խորքային երկխոսություն 2024. անդրազգային կրթություն. խորքային հայացք դեպի անդրազգային կրթությունը կանոնակարգող միջավայր և քաղաքականություն» խորագրով միջոցառմանը:

Գլոբալ երկխոսության միջոցառումների շարքն իրականացվում է Բրիտանական խորհրդի կողմից Միացյալ Թագավորության և օտարերկրյա ոլորտային փորձագետների հետ համագործակցությամբ՝ այս տարի ներգրավելով 18 պետությունների բարձրագույն կրթության պետական քաղաքականության մշակման և ոլորտի միջազգայնացման համար պատասխանատու գերատեսչությունների բարձրաստիճան ներկայացուցիչներին:

Գլոբալ երկխոսության ձևաչափով իրականացվող այս միջոցառման ընթացքում թիրախային քննարկումներ են ծավալվել համաշխարհային մակարդակով բարձրագույն կրթության ոլորտի վրա ազդեցություն ունեցող առանցքային թեմաների շուրջ:

Միջոցառումն ուղղված էր ոլորտը կարգավորող արդիական և կիրառելի իրավական շրջանակների, քաղաքականության, մոտեցումների, մոդելների և ծրագրերի շուրջ տեղեկատվության, տվյալների և փորձի փոխանակմանը՝ կարևորելով անդրազգային կրթության և միջազգայնորեն ճանաչելի որակավորումների վերաբերյալ մատչելի մոտեցումների որդեգրման անհրաժեշտությունը:

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը հանդես է եկել ելույթով «Բարձրագույն կրթության ոլորտում ուսանողների ներկայիս փորձառությունը և ոլորտի զարգացման տեսլականը» քննարկման ընթացքում: Ելույթում Ս.Հայոցյանն ընդգծել է ուսանողների փորձառության վրա ազդող գործոնները, առկա մարտահրավերները և լայնամասշտաբ բարեփոխումներ իրականացնելու համար օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը, ինչպես նաև «Ակադեմիական քաղաք» ծրագրի նպատակները, որոնցով նախատեսվում է ոչ միայն մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացում, այլև ուսանողներին ժամանցի և անձնական աճի ավելի լայն հնարավորությունների ընձեռում: Անդրադառնալով «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում Լոնդոնի արվեստների համալսարանի, Լոնդոնի համալսարանական քոլեջի և Մյունխենի տեխնիկական համալսարանի հետ կնքված պայմանագրերին՝ Ս. Հայոցյանը նշեց, որ անդրազգային կրթության տարբեր մոդելների ներդրման հարցը

կքննարկվի նաև ձեռք բերված պայմանավորվածությունների ներքո Ակադեմիական քաղաքի տարբեր կլաստերների ձևավորման աշխատանքների շրջանակում:

Միջոցառման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև բարձրագույն կրթության միջազգայնացման գործընթացի հիմնական մարտահրավերներին և դրանց հնարավոր լուծումներին՝ նպատակ ունենալով ստեղծել ոլորտային համագործակցության ցանցեր և գիտելիքի փոխանակման ակտիվ համայնքներ:

Միջոցառման ընթացքում կայացել են այցեր Սելֆորդի համալսարան և Ակադեմիա 92 համալսարան տեղում անդրազգային կրթության ընձեռած հնարավորություններին ծանոթանալու նպատակով:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթեր

Միջոցառման մասնակիցների կողմից նշվեց երկխոսության կարևորությունը և առաջարկվեց շարունակել խորքային քննարկումների շարքը: Բրիտանական խորհուրդը կքննարկի երկխոսության շարունակականության հարցը՝ քննարկումների նոր ձևաչափերի մասին տեղեկությունը փոխանցելով ազգային ներկայացուցչություններին:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Բրիտանական խորհրդի հայաստանյան ներկայացուցչություն ղեկավարի հետ քննարկվել է անդրազգային կրթության ռազմավարության մշակման գործում Բրիտանական խորհրդի կողմից հնարավոր աջակցության հարցը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում առավել մանրամասն քննարկել ռազմավարության մշակման նպատակով միջազգային փորձագետների ներգրավման հարցը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Սարգիս Հայոցյան

19 նոյեմբերի 2024թ.